



ՌՅԺԹ. 1870 — ԲՍԱՆԵՐՈՐԴ ՌԻԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ. — ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԿԱՄԵՒՈՐՈՒԹԻՒՆ ԲԱՐԻՈՒԹ ԴԱՍՏԻԱՄԱԿՈՒԹԵԱՆ

(Տես էրես 328)

Զեխոշքեան հետևանքները :

Աւաղ, որ դրացի իշխանին ապէտաւ լի գուշակութիւնը, թէ իր անառակ որդիքը խրատով ուղղելու ժամանակը շատ անագան էր, վերջապէս ճշմարիտ ելաւ ահաւոր կերպով մը, որով ճշմարտեցաւ այն առակն ալ թէ՛ Զրոյ սափուրը ջրոյն ճամբան կը կոտորի :

Երբ Օսքար Հայրական անիծիւք դրոշմուած՝ դարձաւ նորէն մայրաքաղաք, բնաւ չէր կրնար ուրախանալ իր հօրը դէմ տարած յաղթանակին վրայ. երեսը միշտ տխրութեան սև ամպը պատեր էր. և երբ իր որոմնացան վարժապետը կը ջանար անոր սիրտը զուարթացնելու, նա բացէ՛ի բաց կը վարէր զանկայ քովէն : Սրտին վիշտերը անընդհատ աճելով անհանդուրժելի կը դառնանային. և զանոնք փարատելու համար, բերած բազմադուամար դրամէն քիչ մը բան տալով եղբօրը, միւս մնացածը ամբողջ իր գրպանին մէջ կը դնէր, և

առաջուան պէս ինքզինքը անկարգ կենցաղավարութեան կու տար, անմաքուր տեղերու ու պանդոկներու մէջ յաճախելով. այս բանս իրեն ամենօրեայ սովորութիւն ըրած էր : Սակայն օր մը նախ անձամբ կ'երթար պարտատէրնէրը հանդարտեցնելու, ըսելով անոնց թէ՛ ինքը հօրը հետ խօսեր է, և հայրն ալ իրեն ստոյգ խոստացեր է քիչ առնէն իր գործակալին ձեռքովը պէտք եղած դրամը յղելու : Ստահակը մէկ կողմէն միտքը դրեր էր որ այսպէս քանի մը շաբաթ զուարճանալէն ետև պարտքերուն կէսը վճարելով՝ պարտատեարց դիմացը նորէն լաւ վարկ ունենայ, և միւս կողմէն եղբայրը կը խաբէր թէ պարտքերը սրբած է :

Այս իր դատարկապորտ զուարճութեանցը հետևանք օր մըն ալ պատահեցաւ որ ունեցած գումարին մէկ մեծ մասը այնպիսի մարդկանց ճիրանին մէջ ինկաւ՝ որ լաւ գիտէին բոլոր գրպանէն անոր զայն որսալու ճամբան : Ուստի

օր մը Օսթարին չատ զուարթացած ա-
տենը, որ բռնի կը ջանար զուարթ ձևա-
նալու, բռնուեցաւ խորամանկ խաղա-
ցողաց խումբէ մը. խաղի ատեն գինիի
գաւաթները ետէ ետէ լեցուելով կը
պարպուէին. արդէն խաղի մէջ բախտ
չունենալով Օսթար, ամբողջ դրամի գու-
մարներ անդադար յօդս կը ցնդէին մին-
չև գրպանին տակը հասնելու չափ:

Նոյն օրը Օսթար ամենևին բարկու-
թեան ցոյց մը չիտուաւ արտաքսապէս.
վասն զի միտքը դրեր էր թէ չատ վար-
պետ խաղացող է, և անով կը ջանար
խրախոյս տալ անձին, բայց ի գուր, զի
ի ներքուստ սիրտը կը սողորէր անե-
րևութացած դրամոց վրայ: Այսպիսի
զգացմամբ բաժնուելով խաղակիցներէն
մտաւ ուրիշ պանդոկ մը՝ ուր գիտէր թէ
քիչ մը դեռ վարկ ունի, քանի մը գա-
ւաթ խմեց դարձեալ, և ապա գիշերը
մութին տուն գնաց ներսէն զինքը լա-
փող կրակ մը հետը տանելով: Երբ տուն
հասաւ դեռ արթուն գտաւ եղբայրը՝ որ
զլուխը սեղանին վրայ կռթնցուցած
նստեր էր, և վարժապետն ալ հոն սըր-
տի նեղութենէն սենեկին մէջ վեր վար
ժուռ կու գար: Օսթար ներս մտնալուն
պէս Ալպերտ վեր ցատքեց նստած տե-
ղէն, և բարկութեամբ մօտենալով եղ-
բօրը ըսաւ համարձակ.

— Ինչո՞ւ դու զիս այսպէս խաբեցիր.
մեր պարտատեարքը անցած երեկոյ
հոս ժողվուեցան և ինծի հօրերնուս ըս-
տորագրութեամբ հրատարակեալ դը-
րուածք մը ցուցուցին, որով հասարա-
կաց կը ծանուցանէ, որ ինքը մէկու մը
համար երաշխաւորութիւն յանձն չառ-
նուր և ուրիշի լաւ անունը պահելու հա-
մար՝ անոր գանձապետ չըլլար. ասիկայ
յայտնի ըլլալով՝ արդ ամենքը կը պա-
հանջեն մեզմէ իրենց դրամները որ փոխ
տուեր են: Ես մինչդեռ զարմացած այս
պահանջմանց վրայ, կ'ըսէի անոնց, թէ
սղէկ գիտեմ որ եղբայրս ձեզի վճարած
է. անոնք երեսս վար առնելով զիս ծաղր
կ'ընէին խաբեբայ ստախօս պոռալով, և
մեզի բանտ կը սպառնային եթէ իսկոյն
վաղը չիվճարենք: Ի՞նչ է այդ քու ըրածդ.

ինչպիսի յանդգնութիւն՝ որ զիս մարդու
տեղ չես դնիր. շուտ համար տուր, ինչ
ըրիր այն դրամները:

Օսթար լրբաբար ծիծաղելով անոր
վրայ և ծուռ նայելով մը ոտքէն մինչև
գլուխը չափելով կ'ըսէր.

— Ես բերեր էի զանոնք տունէն և ին-
ծի կը վայէր զանոնք ըստ հաճոյս գոր-
ծածելը, հիմա քեզի ինչ փոյթ. դու ալ
գնա՛ ինծի պէս գլխուդ ճարը տես և սըր-
տիդ փափաքածը կատարէ, կը տեսնաս
որ ես ամենևին մէջը չեմ մտնիր:

Օսթար յետ այս խօսքերս զուրցելով՝
բարձրաձայն խնտալով գնաց իր ննջա-
րանը և առանց հանուելու ինկաւ հոն
դիակի մը պէս և սկսաւ խոր քուն ըլլալ:
Ալպերտ սաստիկ բարկութենէ երեսնե-
րը կրակ կտրած եղբօրը քով գնաց, որ
չափազանց արբած ըլլալով ինքզինքը
կորսնցուցած էր, և զանիկայ արթնցը-
նելու համար կը խթէր ու կը շարժէր.
բայց տան վարժապետը՝ որ սկսեր էր
ճանչնալ ու սարսափիլ, իր տուած աղ-
նիւ կրթութեան պտուղները տեսնա-
լով, քովը մօտենալով կ'աղաչէր անոր
ըսելով.

— Խնդրեմ, Ալպերտ, թող այս գի-
շեր լաւ մը հանգիստ քնանայ, և դեռ
վաղն ալ մինչև կէս օր մի խօսիր հետը
ու ամենևին բան մը մի յիշեր. առ-
տուանց կանուխ դուրս կ'երթամ ես ա-
մեն տեղ հարցընելու՝ թէ արդեօք Օս-
թար իրաւցընէ բոլոր դրամի գումար-
ները խաղի մէջ կորուսեր է:

— Լաւ է, պատասխանեց Ալպերտ,
ես այս անտանելի համբերութիւնն ալ
յանձն կ'առնում:

Այս միջոցիս Քլայն սաստիկ կը դող-
դողար և տեսնալով Ալպերտին կրակ
դարձած աչքերուն շարժումները՝ արիւ-
նը կը ցամքէր. բայց դարձեալ կրկին ու
կրկին աղաչելով կը խնդրէր սաստիկ
բարկացողէն որ համբերէ դեռ մինչև
վաղը: Ալպերտ ալ խոստացաւ վարժա-
պետին աղաչանքը կատարելու. սակայն
երբ Քլայն սաստիկ հոգերու մէջ տըր-
տում դուրս ելաւ նոյն սենեկէն, իր ե-
տէն Ալպերտին զուրցած այս խօսքը.

րը լսեց. « Աւելի կ'ընտրեմ իմ ձեռքս
գնտակ մը գլխուս մէջ արձրկել ու մեռ-
նիլ՝ քան թողուլ որ բանտէն զիս. բայց
նախ պէտք է որ աս զիս խաբելուն պա-
տիժը ընդունի » :

Այս խօսքերս լսելու ատեն կը կար-
ծէր Քլայն թէ երկնքէն կայծակունք կը
տեղան գլխուն վրայ. իր սենեակը մը-
տաւ, բայց միանգամայն առաջին ան-
գամ մը սկսաւ խիղճը ուտել զինքը ներ-
քուստ, մտածելով որ իրեն յանձնուած
պատանեաց զեղիս վարուցը ինքն եղբր
էր թելադրիչ և օգնող. և լաւ գիտնա-
լով անոնց ինչ կրից տէր ըլլալը, առա-
ւօտանալու աւուր յիշատակը մտածե-
լով կը գողար սարսափէն. « անշուշտ
շատ նշանաւոր դարհուրելի հանդիսա-
նայ պիտի վաղուեան օրը, կ'ըսէր, եթէ
Աստուած կերպով մը օգնութեան չի-
հասնի » :

Քլայն նոյն գիշերը բնաւ չկըցաւ քը-
նանալ, և իր սենեակը՝ յամրաքայլ վեր
վար կը չափէր զգուշանալով որ չլսուի,
ատեն ատեն յանկարծ ահաւոր տագ-
նապ մը կը պատէր զինքը, մինչև արիւ-
նը գլխուն զարնելու չափ. երբեմն ալ
կը մտածէր որ իր բաները ժողովէ ու
ծածուկ փախչի անկից : Բայց քիչ մը
հանդարտելէն ետև կը ճանշնար որ եթէ
փախչի, այնու իր մեծ յանցաւոր ըլլա-
լը պիտի յայտնուի. յետոյ ինքն զինքը
գտնալով և բանտուելէ վախնալով ա-
ռաւօտեան լուսոյն կը սպասէր ահաբեկ :

Ժամերը յամրաքայլ սահելով հա-
սաւ վերջապէս կարմրափայլ արշալոյ-
սը. « Ո՛վ, ինչպէս արիւն դարձած է այս
աւուր արեւուն ծագման օթարանը » .
կ'ըսէր Քլայն մտատանջութենէ սիրտը
թունդ ելած. և տեսնալով որ փողո-
ցաց մէջ ձայները զիշերուան ահաւոր
լուծեան տեղ կը յաջորդէին և գոր-
ծաւորը կը փութային իրենց սահմանած
գործոցը հասնելու, այն ատեն ինքն ալ
յանկարծ միտքը եկած յուսով մը զօ-
րացած՝ կամացուկ իր սենեակը կը թո-
ղուր, ու փողոցներու մէջ արագ արագ
վազելով շունչը կարած բարեպաշտ իշ-
խանին որդւոցը տունը կը հասնէր, ու

րոնք ինչպէս ժիր ուսանողներ հա-
գուած և պատրաստուած իրենց ուս-
մանցը կը զբաղէին : Քլայնի ներքին
անձկութիւնը սաստիկ ըլլալով՝ ներս
մտածին պէս իսկոյն աղաչանք կը մա-
տուցանէր այն փութաշան երիտասար-
դաց. առանց յառաջաբանութեան կարճ
'ի կարծոյ ամեն բան անոնց պատմելէ
ետև, ինչ որ եղբր անցեր էր և ինչ որ
քիչ ժամանակի մէջ ըլլալու վախ կար,
կ'ըսէր ողորմագին. « Կ'աղաչեմ ձեզի
Աստուծոյ համար ըլլայ օգնութեան հա-
սէք. ախ, օգնեցէք և ազատեցէք զանոնք
մահուան վտանգէն. վասն զի ես ստոյգ
գիտեմ, որ իմ երիտասարդ տեարքս թէ
մէկը և թէ միւսը առաւել մահ կ'ընտ-
րեն քան բանտ » :

— Ո՛վ Աստուած, կ'ըսէր Հենրիկոս,
տէր երկնի և երկրի, գու մեղի լոյս
պարգևէ, թէ ինչ պէտք է ընենք : Կը
լսե՞ր որ Օսթար ամբողջ գումարը, զոր
հայրը իրենց պարտքերը վճարելու հա-
մար տուեր է, խաղի մէջ տարբեր կորու-
սեր է. այս իր ըրածը անլուր բան է և
մեծեղեռն անդգամութիւն :

— Այո, անոր ըրածը շատ գարշելի
բան է, բայց ճար չիկայ, պէտք է հիմա
օգնել և ազատել զանոնք : Այս ըսելով
աւելի կը թախանձէր Քլայն, որպէս զի,
կ'ըսէր, օգնութիւն գտնալով շուտ մը
տուն դառնամ, որ չըլլայ թէ երկուքը
զիրար սպաննեն կռուելով մէջերնին :

— Արդ ես օգնելու համար ուրիշ ճար
չեմ գտնար, բաց 'ի փութով ամեն բան
հօրս գրով ծանուցանելէն, զուրցեց
Հենրիկոս, (և Մօրից ալ անոր քովը կե-
ցած միտ կը դնէր, և աչքէն կաթած ցա-
ւակցութեան արցունքը կը սրբէր.) բայց
այս ճամբով ալ օգնելն շատ ուշ կ'ըլլայ :

— Ախ, այդպէս ընելդ անօգուտ բան
է, և շատ ալ կ'ուշանայ, կ'ըսէր Քլայն
դէմքը դեղնած, և այն ատեն ըլլալու
մեծ դժբաղդութիւնն ալ կատարուած
կ'ըլլայ :

Հենրիկոս տարակուսանաց մէջ ինչ
ընելը չգիտնալով ուսերը կը թօթուէր,
ու ձեռքերը խաչաձև կրծիցը վրայ դը-
րած քիչ մը ատեն խորունկ կը մտա-

ծէր. յետոյ իսկոյն զլխարկը ձեռքն առած՝ հարցուց Քլայնի հարկաւոր եղած դրամին գումարը, և լսելով անոր քանակին շատութիւնը կը սարսափէր. բայց կը խոստանար տակաւին ամեն ձեռքէն եկածը ընելու, և աճապարելով մը միայնակ տունէն դուրս ելաւ, Քլայնը Մօրիցին քովը ձգելով:

Հենրիկոս վշտագին գլուխը կախած կ'երթար, և յամենուստ անօգնական զգալով ինքզինքը՝ նախ եկեղեցի մը մտաւ, որ ջերմեռանդն աղօթքով Աստուծմէ լոյս խնդրէ որ իրեն ճամբայ մը ցուցնէ: Սուրբ պատարագը լմնցեր էր, դեռ քանի մը անձինք այն նուիրեալ տեղը չողած կ'աղօթէին. Հենրիկն ալ չոգելով սկսաւ իր հառաչանայ մաղթանքը՝ ջերմեռանդութեամբ և արտասուօք Աստուծոյ առջին դնել: Յետոյ ոտք ելլելով սրբեցթաց աչքերը և դուրս ելաւ եկեղեցիէն առանց գիտնալու թէ ուր երթալու է: Նոյն ատեն իսկոյն իմացաւ, որ մարդ մը կամացուկ իր բազուկը բռնեց, զլուխը դարձնելով տեսաւ այն քաղցրաբարոյ քաղաքացւոյն դէմքը, որուն միամօր որդին կրակէն ազատեր էր:

— Հիմա ըստ ինքեան պէտք էր որ ես գրեզ լաւ մը յանդիմանեմ, ըսաւ քաղաքացին՝ Հենրիկին ձեռքը իր ափին մէջ անուշ կերպով մը բռնելով. ես անմիջապէս քու ետեւը չողած էի ժամը, կը լսէի քու լալական հառաչանքդ ու մտքէս վրադ կը բարկանայի, որ դու այնչափ մեծ վիշտ ունիս և զայն ինծի յայտնելու չես համարձակիր. ինչ ունիս որ կը տանջէ գրեզ այդքան. խընդրեմ զուրցէ և առիթ տուր ինծի որ իմ երախտապարտութիւնս կարենամ գէթ փոքր կերպով մը հատուցանել:

Ճշմարիտ է առակին խօսքը, թէ ինչ որ սրտին մէջ կայ՝ այն կու գայ բերանը. հիմա ալ նոյնը կը կատարուէր: Հենրիկին սիրտը սաստիկ լեցուն ըլլալով ճաթելու մօտիկ էր, և այս դէպքիս մէջ մասնաւոր Աստուծոյ հրաշքը տեսնալով՝ պատմեց նոյն առաքինի մարդուն իր սրտին տալանապը:

— Այո՛, այո՛, ուրեմն իմ քու վրադ ունեցած կարծիքս սխալ չէ եղեր, վըշտակեցելով ըսաւ քաղաքացին. գիտեմ՝ որ դուք շատ բարի ու առաքինակրօն երիտասարդք էք, և գիտեմ ալ որ անոնք շատ ստահակ տղայք են, և ձեր այդ մեծ սիրոյ ցաւակցութեան ու խնամոցը բնաւ արժանի չեն. բայց արդ ձեր սիրոյն համար միայն անոնց ալ օգնելու յանձն կ'առնում. դու փութա հանգիստ սրտով եղբօրդ քով, ես ալ շուտով տուն կ'երթամ ու դրամը առնելով ետեւդ կու գամ. հոն ձեր սենեակը սպասող անոնց վարպետը, որ կարծեմ՝ շատ անպիտան մարդ պիտի ըլլայ, թող երթայ բոլոր պարտատէրները կանչէ ինչուան ես գամ, վասն զի ես ձեռքովս կ'ուզեմ վճարել՝ որ տուած դրամս առաջուան պէս չիկորսուի:

Հենրիկ անպատմելի ուրախութեամբ լցուած պատասխանեց.

— Ես քեզ ամբողջ տուած դրամիդ համար գիր կու տամ՝ որ յետոյ հայրս վճարէ քեզի ամբողջ:

— Ես քեզմէ ամենևին գիր չեմ ուղեր, և ոչ ալ հօրմէդ կը պահանջեմ՝ որ այդպիսի վատ ու անառակ մտաւորներուն պարտքը վճարէ. ես ալ, ազնիւ երիտասարդ, միայն ձեզի ու քու սիրոյդ համար կ'ընեմ, որ չտրամիս ու չիվշտանաս. վասն զի դու քու քաղցր կեանքդ իմ որդւոյս համար վտանգի մէջ դնելով ազատեցիր զանիկայ: Եթէ անոնց հայրը արդարասէր մարդ է, անտարակոյս եմ որ յետոյ դրամս ամբողջ կը վճարէ, իսկ եթէ այնպէս չէ, թող իմ ստակս ալ կորսուի: Դեռ ես ուրիշներու քով փոխ տուած գումարներ ունիմ՝ որոնց հատուցումը (երկինքը ցուցնելով կ'ըսէր) հոն վերը կը յուսամ առնելու:

Երկու բարեկամը սիրով իրարու ձեռքը սեղմելով բաժնուեցան, և Հենրիկ սրտին ուրախութենէն այնպէս երազ կը վազէր ճամբան՝ որ քրտինքը վտակօրէն ճակտէն կը հոսէր. և տուն հասածին պէս ըսաւ զուարթաբար յու.

սահաւո փչայնի՝ որ անկիւն մը քաշուած տրտում կեցեր էր .

— Գնա՛ շուտ Օգբարին ու Ալպերտին բոլոր պարտատէրները հոս կանչէ, և ըսէ անոնց որ փոխ տուած դրամոց մուրհակներն ալ հետերնին բերեն :

— Ուրեմն երանի ինծի, աղէկ բախտս բաներ է, կանչեց փչայն, որ սպառնալից փտանգը անցնելուն պէս նորէն իր առաջին թեթեամիտ բնութիւնը կ'առնուր մոռնալով ամեն երկիւղ ու վտանգ :

Այս եղկելի մարդուն դուրս երթալէն վերջը Հենրիկ պատմեց եղբորը իր եկեղեցւոյ մէջ աղօթելը և այն բարեպաշտ քաղաքացւոյն հանդիպիլը, որ զինքը խօսքի բռներ էր ու իրմէ ամեն բան լսելէն ետե՛ հիմա շուտով խոստացեր էր օգնելու : Մօրից ուրախութենէն ձեռք ձեռքի դրած գոչեց .

— Ո՛վ, որչափ ողորմած է մարդասէրն Աստուած, և որչափ մեծ խնդութիւն ու քաջալերութիւն է մարդու սրտին համար այն երջանիկ մտածութիւնը՝ թէ Աստուած մեր ծանր նեղութեանցը մէջ քովերնիս է մեզի պատրաստ օգնելու . ել, եղբայր, շնորհակալ ըլլանք իրեն, և միանգամայն խնդրենք իրմէ որ մեր տղայութեան ընկերներուն կուրցած աչքը բանայ, որ գէթ այսուհետեւ կարենան իրենց ճշմարիտ սրտի հանգիստը ու յարատեւ երջանկութիւնը ճանչնալ ու գտնալ :

Հազիւ այս խօսքերս լսնցան, Մօրից չոգեցաւ աղօթելու և Հենրիկն ալ իրեն հետեւեցաւ . երբ տակաւին երկու եղբարք այս դրից մէջ էին, դռնէն ներս մտաւ երախտադէտ քաղաքացին դրամով լի պարկ մը շալակն առած, և այն երիտասարդները ծնկի վրայ տեսնալով ինքն ալ մէկէն անոնց հետեւելու փութաց : Բայց յանկարծ երկու եղբարք տեսնալով զանիկայ՝ ամբշտած վեր կայնեցան . այն ատեն ըսաւ քաղաքացին .

— Ահա բերի պէտք եղած ամբողջ գումարը . ես այս դրամը իմ ճակտիս քրտամբը և արդար վաստակով ձեռք բերեի եմ, և ո՛ր տայր թէ այս դրամը բա-

րի վախճանի մը համար տայի . վասն զի յոյս չունիմ որ այն տղմի մէջ ինկածները առով ազատենք, և շատ հաւանական կ'երևայ ինծի որ նորէն առջի փախածնին կը դառնան :

Դեռ երկու եղբարք այն բարեպաշտ մարդուն պատասխան մը չտուած, ահա դուռը իսկոյն ինչուան կռնակը բացուեցաւ և վարժապետը զուարթերես ներս մտաւ ոտքերը քսելով և բեկբեկ ձեւով . « Ահա բերի հետս իմ թիկնապահներս » ըսելով՝ պարտատէրները կը ցուցնէր, որոնք անոր ետեւէն լկախ մտերմութեամբ ներս կը մտնէին . որոց մէջ բարի քաղաքացին նայուածքով մը շատ համբաւաւոր խաբեբայ վաշխառուներ տեսաւ : Տրտմութեամբ ճակատը կնճռելով բացաւ բերանը անոնց դէմ, և լաւ մը անոնց ըրածը երեսնին զարնելով՝ ըսաւ որ մի առ մի խաբուսիկ մուրհակներն ցուցնեն, և ինքն ալ մէկ կողմանէ պարկէն ստըկի ծրարները դուրս կը հանէր : Պարտատեարք մուրհակներն կարգաւ անամօթաբար տալով՝ դրամներն առած կ'ելլային կ'երթային : Յետոյ երբ քաղաքացին վերջին ծրարն ալ տալով բոլոր վաշխառուք ելան գնացին՝ աղաչեց երկու եղբարց քիչ մը սննեկին պատուհանները բանալ, որ մաքուր օգնեցան շնչէ : Այս ըլլալէն ետեւ բարի քաղաքացին դէպ 'ի վարժապետին դառնալով և անոր արհամարհանօք մը նայելով ըսաւ .

— Պարզ թեթեամիտ սրիկայի մը ձեւը ընելու՝ դու շատ ծեր ես . արդայտնի կ'ըսեմ՝ քեզի, թէ դու զիս շատ վըշտացուցիր, երբ փոխանակ կարմրնալու ըրածներուդ վրայ՝ այնպիսի լիրբ զուարթութեամբ ներս մտար : Մեղք որ դեռ որդիս խիստ մատղաշ է, ապա թէ ոչ՝ զքեզ իմ տունս կ'առնէի մէկ հատիկ որդիս կրթելու, որ զանիկ ալ քեզի պէս անաստուած ապերասան մ'ընէիր . կայ արդեօք արեգական տակ աւելի գէշ բան մը քան քու հօր մը դէմ ցուցած անհաւատարմութենէդ . չուանն իսկ շատ փինջ է քու անպիտանութիւնդ աշխարհէս մաքրելու : Շուտ աստի կո-

րիւր հիմա, վասն զի այսչափ նեղութե-
նէ ետքը քիչ մը ատեն իմ ազնիւ երի-
տասարդ բարեկամացս հետ զուարճու-
թեամբ կ'ուզեմ անցունել:

Տան վարժապետը այսպիսի տեսա-
րանաց վարժ ըլլալով, յարգութեամբ
զլուխը ծռած դուրս ելաւ:

Երբ հոս երկու եղբարց և քաղաքա-
ցւոյն մէջ այս բաներս կը պատահէին,
անդին մննող տղայութեան բարեկամ
ներուն մէջ ալ այնպիսի տեսարան մը
բացուեր էր, որ թէպէտ և հետաքրք-
րութիւն կը շարժէ լսելու, բայց լսո-
ղին սիրտն ալ առանց կարեւորէր խոցէ
մը զարնուելու չի դիմանար:

Օպար իր քունէն շատ կանուխ ար-
թընցաւ քան ինչ որ կը կարծէր վար-
ժապետը. երկու եղբարց իրարու մէջ
նախ խօսքով հակաճառութիւն մը սկը-
սաւ, որ ապա մեծ կռուի մը փոխուե-
ցաւ. մինչև սուրը որմէն վար առնելով՝
ծայրը մէկմէկու դէմ կը սկսէին շարժել.
անկէ Ալպերտը կուրծքին վրայ վիրա-
ւորուելով վար կ'իյնայ: Այն ատեն հօր
մէն անիծեալ եղբայրասպանը տանը
մէջ եղած բոլոր թանկագին բաները
հետը առնելով տընէն դուրս կ'ելայ, և
փախուստ կը փնտռէ որ կեանքը ա-
զատէ:

Երբ Քլայն պարտուց հատուցման ու-
րախալի լուրը իր աշակերտներուն կ'ու-
զէր աւետել, սենեակը դատարկ գտաւ,
հայելին կտոր կտոր եղած, աթոռները
ասդիս անդին վար կործանած, երկու
սուր ուրիշ բաներու հետ խառնափնդոր
գետինը, և տանը յատակը արեամբ ծե-
փած: Այս տեսարանէն ահռելով ետ
ետ քաշուեցաւ. բայց յետոյ սիրտ ընե-
լով վար թափած արեան հետքէն դո-
ղալով սենեակ մը գնաց՝ որուն դուռը
կիսաբաց էր, ուսկից ցաւալի խորդա-
լու ձայն մը ականջը հասաւ: Տարա-
բախտ Ալպերտը՝ ինքնիրեն բռնութիւն
ընելով նոյն սենեակը գնացեր էր, ու մե-
ռելատիպ ինկած անկողնոյն վրայ, եր-
կու ձեռքովը կուրծքին մահացու վէրքը
ամուր կը սեղմէր: Այն տեսարանին առ-
ջին Քլայն փոխանակ սիրտ ընելու՝ խռո-

ված ու սարսափած ինքզինքը կորսն-
ցուց և ինկաւ մարեցաւ:

Այլ այն սաստիկ մարելէն արթըն-
ցուց զինքը զօրաւոր մարդու մը ձեռքը՝
որ զինքը բռնած վեր կը քաշէր. աչքերը
բանալով այն քաղաքացւոյն երեսը տե-
սաւ, որ քիչ մը առաջ երկու եղբարց
պարտքը վճարեր էր. անոր քովը տե-
սաւ նաև քահանային բարեկամ իշխա-
նը, անոր որդիքը, ծեր էրհարտը, ժո-
ղովրդապետը և դժբաղդ Ալպերտին
հայրը:

Ասկէ աւելի ահռելի տեսարան մը
չէր կրնար բացուիլ առջին. յանկարծ
յուսահատական ձայն մը հանելով՝ սե-
նեկէն դուրս ելաւ՝ սանդուղներէն վար
ինջաւ, և փողոցներու միջէն փախչելով
դնաց, մինչդեռ ոչ մէկին միտքէն կ'անց-
նէր զանիկ բռնելու:

Երբ երկու եղբարց մէջ այն կռիւը
ծագելով ետքը ետքը արիւնհեղու-
թեամբ կը վերջանար, նոյն միջոցին
ճամբորդներն ալ մայրաքաղաք հասնե-
լով Հենրիկին ու Մօրիցին սենեակը կը
մտնային. և երբ հոն ազնուամիտ քա-
ղաքացին ամեն պատահածները կը
պատմէր այն անտուակ տղայոց տարա-
բախտ հօրը, հօրերնուն սիրտը սաստիկ
շարժելով Հենրիկին ու Մօրիցին վիզը
պլլուեցաւ, և յետոյ քաղաքացւոյն ալ
չնորհակալ եղաւ՝ որ իր որդւոցը պա-
տիւր կորստեան միջէն ազատեր էր. և
միանգամայն խոստացաւ անոր, որ տուն
դարձածին պէս շուտով զրկէ թէ քա-
ղաքացւոյն ամբողջ ստակը և թէ Հեն-
րիկին առաջուց Օպարի փոխ տուածը:
Ասկից ետեւ ամենքը՝ ի միասին գնացին
երկու մննող եղբարց բնակարանը որ
անոնց ծանր յանդիմանութիւն մը տան,
և թէ կարելի ըլլայ անոնց սիրտը շար-
ժելով դարձի բերեն: Փոխանակ անոնց
կռուելուն պատահելու՝ ինչպէս կը կար-
ծէին, հիմա հոգեվարքի մը բնակարանը
մտան. այն օրհասականին ողորմելի
տեսիլը հօրը արդար ցասումը մարեց և
անոր քովինները անճառ ցաւակցու-
թեամբ լցուց:

Ալպերտին աչքերը արցունքով լե-

ցուեցան երբ յանկարծ իր հայրը քովը տեսաւ. հայրն ալ չկարծելով բնաւ թէ որդին այսպիսի վիճակի մէջ գտնայ, այլագոնեալ կը նուագէր իր վիրաւոր որդւոյն պէս: Որդին մարած ձայնով թողութիւն խնդրեց հօրմէն և հաշտութեան ձեռք երկընցուց անոր:

Ո՛վ Աստուած, արդեօք ինչ կը մտածէր հայրը, երբ իր որդւոյն պաղ ձեռքը իր ձեռացը մէջ կ'առնուր, որ արդէն մահուան քրտինքով թրջեր էր, և իր գողգոթուն շրթանցը վրայ կը տանէր այնպիսի ողորմ հառաչանօք՝ որ բոլոր առաջիկայից սիրտը կը շարժէր: Երհարտ կարծելով որ թերեւ կարելի ըլլայ զանիկ ապրեցնելու, վազեց վիրաբուժ բերելու:

— Ո՛հ խեղճ տղայս, ո՛վ դքեզ այս վիճակի հասուց արդեօք, հարցուց հայրը, շատ մը ատեն անցնելէն ետքը ինքն իրեն գալով:

— Օգտար, թոթովելով պատասխանեց մահացու վիրաւորը, և մէջ ընդ մէջ ամեն բան կակաղելով պատմեց հօրը, և վերջը թողութիւն խնդրեց եղբօրը համար, ըսելով որ ինքը առաջ զանիկայ գրգռեր էր, և թերեւ անիկայ այս վիճակիս հասնէր, եթէ քան զինքն աւելի աղէկ սուր շարժել չգիտնար:

— Ես կարծեմ որ ըսաւ ժողովրդապետը, հիմա իմ պաշտօնս կատարելու հարկաւոր ժամը հասեր է. գնա՛, շուտ հոս քահանայ մը բեր, զուրցեց կամացուկ մը իր բարեկամին որդւոցը մէկին, որ վերջին թոշակը մատակարարէ:

Յետոյ աղաչեց քովիններուն որ քիչ մը միւս սենեակը հրամեն. երբ անոնք գնացին ինքն ալ դուռը փակեց: Հիմա ամենայն խնամք ձեռք կ'առնուր նոյն արժանաւոր քահանայն այս ապերջանիկ երիտասարդը փրկաւէտ խոստովաւ նութեան մը պատրաստելու. և երբ Հենրիկին կոչած քահանայն եկաւ, ամեն բան կարճ մը անոր պատմելէ ետեւ՝ ուղեց որ ինքն ալ միւս սենեակը երթայ. բայց Ալպերտ փափաք ցուցուց ժողովրդապետին խոստովանելու և անոր ձեռքէն իր յետին թոշակն ընդու-

նելու: Հրաւիրեալ քահանայն Ալպերտին խնդիրքը ամենայն սիրով ու հաճութեամբ կատարեց, փութով հանեց ուրարը՝ տուաւ պաշտօնակցին, և ինքը ետ քաշուելով սկսաւ թշուառ երիտասարդին հոգւոյն համար աղօթել:

Ալպերտ կատարեալ զղջմամբ մը խոստովանելէ ետեւ՝ մահացու վէրքին վրայ ձեռքերը իրարու վրայ դնելով՝ ջերմեռանդաբար ընդունեցաւ հաղորդութեան սուրբ խորհուրդը. յետոյ երկու քահանայից ալ շնորհակալ եղաւ և խնդրեց որ զինքը աղօթքներնուն մէջ յիշեն. և վերջը ինքն ալ շատ յոգնածութենէ անուշ քուն եղաւ:

Մէկ ժամ ետքը Ալպերտ արթնցաւ. հիմա զուարթ էր բոլորովին՝ Աստուծոյ հետ հաշտուած ըլլալով, զոր իր ստահակ կենացը մէջ բոլորովին մոռցեր էր. արդ մահուանէ այնչափ երկիւղ չունէր: « Ո՛վ Աստուած իմ, կ'ըսէր իր հօրը ձեռքը բռնելով, որպիսի դառն անձկութեանց մէջ էի քիչ մը առաջ այս անկողնիս վրայ, և բնաւ չէի խորհեր որ հոս պիտի կնքեմ մահս. երբ 'ի սպառ միակ և անօգնական կը տեսնայի զիս՝ որպիսի ահաւոր խորհուրդներով կը պաշարուէի. իսկ արդ սուրբ թոշակով զօրացած, ո՛հ, որպիսի հանգստութեան մէջ եմ. ահա այս է քրիստոնէին երջանկութիւնը որ ոչ անդին ոչ աստին մահուանէ երկիւղ ունի:

Նոյն ատեն ներս մտաւ Երհարտ վիրաբուժին հետ, որ իր գործիքով սկըսաւ Ալպերտին վէրքը զննել. և հոն եղողներուն բոլորին աչքն ալ յուսոյ ու վախի մէջ անոր վրայ կը նայէր:

— Ի՞նչպէս է, տէր իմ, ախ ըսէ ինծի, աղաչելով կը հարցընէր հայրը, երբ վիրաբուժը գործին մաքրած ամանին մէջ կը դնէր:

Վիրաբուժը փոխանակ պատասխանելու միւս մերձակայ սենեակը գնաց. իսկ Ալպերտ ժպտելով կ'ըսէր. Ա՛հ, մի երթար, հոս կեցիր, վասն զի լաւ գիտեմ որ պիտի մեռնիմ, և մահուան նշանները արդէն ոսկերացս մէջ կը զգամ, և կրնաս համարձակ զուրցել:

բայց մահը ինձի բնաւ ահռելի բան մը չէ հիմա . իմ ամեն մտածութիւնս առ Աստուած կը դիմէ, և հոգիս Աստուծոյ տեսոյն կը ցանկայ :

— Իրաւցընէ հիմա մեռնի պիտոր, յոյս մը չէ մնացեր ապրելուն, կ'ըսէր ցաւազին հայրը վիրաբուժին ձեռքը սեղմելով :

— Որդիդ իբր բարի քրիստոնեայ մը մեռնի պիտոր, և այս մէկ մեծ մխիթարութիւն մըն է բարեսիրտ հօր մը, պատասխանեց վիրաբուժը, իրեն ալ սիրտը լեցուած :

— Ո՛վ Աստուած, շատ ծանրացած է քու ձեռքդ իմ վրաս . Ալպերտ կը մեռնի և Օսքար է զանիկայ մեռցնողը : Ո՛վ Յիսուս, իմ որդիքս ինչ եղան . ո՛ր կրնամ ես մխիթարութիւն գտնել անձ կուժիւնս փարատելու :

— Միայն Աստուծոյ քով, ցած ձայնով պատասխանեց Ալպերտ իր հօրը . և մաքուր որոշ ձայնով մը նորէն թողութիւն կու տար եղբօրը, աղօթելով անոր համար և յետոյ խոնջ գլուխը բարձին վրայ հանգչեցուց : « Ահա հասեր է իմ վրաս գիշերը, ո՛վ Յիսուս, հասիր ինձի օգնութեան » . զայս նուազ ձայնով մը արտաբերելով աւանդեց հոգին :

Այն ատեն թշուառ հայրը իր սիրելոյն նշխարէն զատուիլ չէր ուզեր, անոր համար քովը եղողներն ալ հոն մնացին որ զինքը մխիթարեն . հսկմամբ և աղօթքով անցուցին նոյն աւուր մնացորդը և ամբողջ գիշերը :

Միւս առաւօտ աշխատաւորը որ մայրաքաղաքին մօտիկ տեղ մը թումբ չինելու կ'աշխատէին, ջրոյ միջէն խեղդուած մարդու մարմին մը դուրս քաշեցին, որ էր նա ինքն Փլայն վարժապետը : Նա իր հատուցումը փութով գտեր էր, և իշխանին բարկութենէն ճողոպրելու համար ինքը զինքը գետ նետեր էր : Եղկելին մահկանացւոյ մը ձեռքէն ազատելու համար Աստուծոյ ահեղ ատենին դիմաց կ'ելլար անապաշխար : Անշուշտ ինքն ալ ոմանց պէս այն բանին կը հաւատար, թէ այս կենացս

կայծն, մարդու հոգին, մարմնոյն հետ գերեզմանին մէջ ապականելով կը ցնդի : Այն, արդեօք ինչպէս այս իր սխալը ճանչցած է հոն :

ՎԵՐՁ

Բարոյակիսն և քաղաքակիսն տնտեսառարիւն :

(Տես էրես 230)

Հարստութիւնն, ինչպէս որ ձեզի բնի, կը կայանայ այն ամենայն բանին վրայ որ մարդու կարևոր է՝ օգտակար կամ հաճոյական : Հարուստ ըլլալ ըսելն ուրեմն այս բաներն առատապէս ստանալ կամ հայթհայթել ըսել է :

— Ըստ այսմ, ըսաւ այն ատեն Միքայէլ, հարուստ ըլլալ՝ շատ ստակ ունենալն է . վասն զի երբ մէկը շատ ըստակ ունի՝ ամեն փափաքածը կրնայ ճարել :

— Անտարակոյս, Միքայէլ, հարուստ ենք երբ շատ ստակ ունինք . սակայն հարուստ ըլլալու միակ կերպն առ չէ : Միթէ շատ կալուածներ ունեցող երկրատէրը հարուստ չէ, թէպէտ և կարելի է որ նիւթական ստակ չունենայ : Միթէ պարտք չունեցող վաճառականը՝ որուն շտեմարանները վաճառքով լի են՝ հարուստ չէ, թէպէտ և կարելի է որ գործին մէջ ստակ չունենայ : Տարակոյս չկայ որ հարուստ են . վասն զի իրենց ունեցածովը կրնան ճարել ինչ որ պէտք ունին, միայն թէ ստիպեալ են արծաթ ստակի փոխելու ունեցածնին, որպէս զի կարենան ուղածնին գնել :

Ստակը կարևոր միջնորդ ըլլալով տուրեառութեանց՝ կը հետեցուի թէ հարստութիւնը ստակի վրայ կը կայանայ . ընդհակառակն կարելի է հարուստ ըլլալ առանց ստակի . և ինչպէս ոմանց՝ նոյնպէս է նաև բազմութիւն ժողովրդոց նկատմամբ . ժողովուրդ մը կրնայ հարուստ ըլլալ ու քիչ ստակ ունենալ : Հարուստ է՝ եթէ երկրագործութիւնն